ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՏՋՀ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/1»

ք. Երևան «13» մարտի 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս գործադիր տնօրեն **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Գեվ էյ Պլաստ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Սոս Կոռյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ ք.Երևան, Թաիրով 9-րդ շենքի վերանորոգման և արդիականացման»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են 2019թ մարտի 18-ից և կատարման ժամկետը սահմանվում է 150 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրություն (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 21,960,000 (քսանմեկ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 3,660,000 (երեք միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, բաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է, 3

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորություն չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Գեվ-Էլ Պլաստ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան
ՀՎՀՀ՝ 00846441	ՀՎՀՀ՝ 08416661
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 220083335194100
Կենտրոնական գանձապետարան	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Գեղարքունիք մ/ճ
Աշոտ Կիրակոսյան	Տնօրեն
	Սոս Կոջան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

. 13 . 03

Հավելված թիվ 2
2019 թ. կնքված
ՀՏՊՀ-ԳՀ-ԱՇՀՐ-2019/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՀՀ Ք.ԵՐԵԱՆ, ԹԱԻՐՈՎ 9-ՐԴ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	«ՀՀ ք.Երևան, Թաիրով 9-րդ շենքի վերանորոգման և արդիականացում»	*2019 թվական մարտի 18-ից*	*150 օր տևողությամբ*
ԸՆԴԱՄԵՆԸ		*2019 թվական մարտի 18-ից*	*150 օր տևողությամբ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գև-Էլլ Պլաստ» ՍՊԸ
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ,
գ. Մարուխան
ՀՎՀՀ՝ 08416661
Հ/Հ՝ 220083335194100
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
Տնօրեն
Սոս Կոջյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
2019 թ. կնքված
ՀՏՊՀ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով պայմանագրի

«13» 03

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45461100	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000	21,960,000

*՝ հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ 22, թ. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ,
գ. Սարուխան
ՀՎՀՀ՝ 08416661
Հ/Հ՝ 220083335194100
«Ակբա - Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
Տնօրեն
Սոս Կոջան

Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2019 թ. կնքված
ՀՏՊՀ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » » » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքների					
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
«__» _____ 2019 թ. կնքված
ՀՏՊՀ-ԳՀ-ԱՇՀՊ-2019/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	բանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախապես ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

13.03.2019 թ. կնքված
ՀՏԶՀ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով պայմանագրի
Հավելված 5

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գեվ Էլլ Պլաստ» ՍՊԸ
«Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ,
գ. Մարուխան
ՀՎՀՀ՝ 08416661
Հ/Հ՝ 220083335194100
«Ակբա - Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Գեղարքունիք մ/Ճ

Տնօրեն
Սեն Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 13 » Մարտի 2019 թ. կնքված
ՀՏՉՀ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *

«ՀՀ ք.Երևան, Թաիրով 9-րդ շենքի վերանորոգման և արդիականացման»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	Շինարարական աշխատանքներ				
	Սենյակներ				
	Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ				
1	Առկա պատուհանների բլոկների քանդում զոգերով	մ²	100.620	1.938	195.03
2	Առկա դռների բլոկների քանդում	մ²	30.700	1.235	37.92
3	Մանրահատակի քանդում	մ²	297.400	0.569	169.34
4	10սմ հաստությամբ միջնորմների քանդում	մ²	2.300	0.853	1.96
5	Շին աղբի դուրս բերում բարձում ամիրևաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.300	3.675	8.45
6	Պիտանի նյութերի դուրս բերում բարձում ամիրևաթափերի վրա և տեղափոխում պահեստային տարածք 1կմ	տն	4.500	1.668	7.51
	Շին վերանորոգման աշխատանքներ				
7	Մ/պլաստե պատուհանների տեղադրում ապակեփաթեթ սպիտակ 60մմ /4+4/մմ պրոֆիլ բացվող փեղկով /արտերկիր/	մ²	65.400	43.899	2871.00
8	Նույնը չբացվող	մ²	35.200	29.218	1028.46

1	2	3	4	5	6
9	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից	մ²	22.100	1.432	31.64
10	Պատուհանագոգի արժեքը B=50սմ /սպիտակ/	գմ	44.000	5.634	247.90
11	Ալյումինե արտաքին դռների բլոկների տեղադրում երսոկատրչակով ապակեփաթեթ սպիտակ 60մմ /4+4/մմ պրոֆիլի /արտերկիր/	մ²	10.000	47.236	472.36
12	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	42.300	3.991	168.84
13	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.085	519.301	43.93
14	Ներ շարված պատերի լավորակ գաջե սվաղ	մ²	30.600	2.263	69.26
15	Պատերի գաջե սվաղի նորոգում	մ²	725.400	2.517	1825.99
16	Հարթ թեքությունների սվաղում գաջով	մ²	103.300	3.682	380.37
17	Պատերի և թեքությունների լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	859.300	1.585	1361.75
18	Առաստաղի երեսպատում 9.5մմ հաստությամբ գիպսոկարտոնից	մ²	297.000	5.621	1669.59
19	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	297.000	1.718	510.28
20	Պատուհանների առկա ճաղաշարերի 2 շերտ յուղաներկում, մասնակի վերանորոգումով	մ²	86.500	1.365	118.06
21	30մմ հաստությամբ ցավազե հարթեցնող շերտ	մ²	297.400	1.300	386.65
22	Կերամիկ սալերից հատակի պատրաստում 300x300մմ	մ²	297.400	7.566	2250.02
23	Կերամիկ սալերից շրիշակների տեղադրում 10սմ բարձրությամբ	մ²	32.000	8.341	266.92

1	2	3	4	5	6
	Միաջանցքեր				
	Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ				
24	Առկա պատուհանների բլոկների քանդում գոգերով	$մ^2$	3.500	1.938	6.78
25	Առկա դռների բլոկների քանդում	$մ^2$	3.400	1.235	4.20
26	Մանրահատակի քանդում	$մ^2$	94.000	0.569	53.52
27	10սմ հաստությամբ միջնորմների քանդում	$մ^2$	32.600	0.853	27.81
28	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.760	3.675	6.47
29	Պիտանի նյութերի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում պահեստային տարածք 1կմ	տն	0.900	1.668	1.50
	Շին վերանորոգման աշխատանքներ				
30	Մ/պլաստե պատուհանների տեղադրում ապակեփաթեթ սպիտակ 60մմ /4+4/մմ պրոֆիլ բացվող փեղկով /արտերկիր/	$մ^2$	2.200	43.899	96.58
31	Նույնը չբացվող	$մ^2$	1.200	29.218	35.06
32	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից	$մ^2$	0.800	1.432	1.15
33	Պատուհանագոգի արժեքը B=50սմ /սպիտակ/	գմ	1.600	5.634	9.01
34	ՄԴՖ-ից դռների տեղադրում	$մ^2$	35.200	39.160	1378.44
35	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	$մ^2$	32.600	3.991	130.12

1	2	3	4	5	6
36	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.065	519.301	33.86
37	Նոր շարված պատերի լավորակ գաջե սվաղ	մ²	33.900	2.263	76.73
38	Պատերի գաջե սվաղի նորոգում	մ²	305.800	2.517	769.77
39	Հարթ թեքությունների սվաղում գաջով	մ²	19.40	3.682	71.44
40	Պատերի և թեքությունների լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	359.100	1.585	569.07
41	Առաստաղի երեսպատում 9.5մմ հաստությամբ գիպսակարտոնից	մ²	94.000	5.621	528.42
42	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	94.000	1.718	161.50
43	Պատուհանների առկա ճաղաշարերի 2 շերտ յուղաներկում, մասնակի վերանորոգումով	մ²	3.500	1.365	4.78
44	30մմ հաստությամբ գ/ավազե հարթեցնող շերտ	մ²	94.000	1.300	122.21
45	Կերամիկ սալերից հատակի պատրաստում 300x300մմ	մ²	94.000	7.566	711.17
46	Կերամիկ սալերից շրիշակների տեղադրում 10սմ բարձրությամբ	մ²	9.700	8.341	80.91
	Մանհանգույցներ				
	Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ				
47	Առկա պատուհանների բլոկների քանդում գոգերով	մ²	2.800	1.938	5.43
48	Առկա դռների բլոկների քանդում	մ²	10.100	1.235	12.48
49	Կերամիկ սալերից հատակների քանդում	մ²	14.300	0.446	6.37
50	10սմ հաստությամբ միջնորմների քանդում	մ²	35.100	0.853	29.95
51	Շին աղբի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	2.100	3.675	7.72
52	Պիտանի նյութերի դուրս բերում բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում պահեստային տարածք 1կմ	տն	0.200	1.668	0.33
	Շին վերանորոգման աշխատանքներ				
53	Մ/պլաստե պատուհանների տեղադրում ապակեփաթեթ սպիտակ 60մմ /4+4/մմ պրոֆիլ բացվող փեղկով /արտերկիր/	մ²	2.800	43.899	122.92
54	Պատուհանագոգերի տեղադրում պլաստմասե նյութից	մ²	0.600	1.432	0.86
55	Պատուհանագոգի արժեքը B=50սմ /սպիտակ/	գմ	1.200	5.634	6.76
56	Մ/պլաստե ապակեփաթեթ սպիտակ 60մմ /4+4/մմ պրոֆիլի դռների /արտերկիր/	մ²	10.100	47.236	477.09
57	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	35.100	3.991	140.10
58	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.070	519.301	36.45
59	Նոր շարված պատերի լավորակ գաջե սվաղ	մ²	70.200	2.263	158.89
60	Պատերի գաջե սվաղի նորոգում	մ²	43.700	2.517	110.00

1	2	3	4	5	6
61	Պատերի լավորակ ց/ավազե սվաղ /հախճասալի տակ/	մ²	84.000	1.665	139.89
62	Պատերի երեսպատում հախճասալով /270x370/մմ ձափերով	մ²	84.000	5.455	458.18
63	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	58.000	1.718	99.65
64	Առաստաղի երեսպատում 9.5մմ հաստությամբ գիպսոկարտոնից	մ²	14.300	5.621	80.39
65	Մ/պլաստե խուլ 5սմ հաստությամբ բաժանիչ տարերի տեղադրում	մ²	12.800	29.218	373.99
66	Մ/պլաստե խուլ 5սմ հաստությամբ խցիկների դռների տեղադրում	մ²	6.800	37.594	255.64
67	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ²	14.300	1.300	18.59
68	Կերամիկ սալերից հատակի պատրաստում 300x300մմ	մ²	14.300	7.566	108.19
	Տանիքային աշխատանքներ				
69	d=100մմ ջրահեռացման խողովակների տեղադրում (55.3գմ) ձևավոր մասերով, ձագարներով	կ-տ	7.000	32.109	224.76
	Արտաքին պատերի ճակատային աշխատանքներ				
70	Պատերի կողային ճակատի լավորակ ց/ավազե սվաղ 4Br ցանցով	մ²	91.000	3.724	338.89
71	Տուֆե երեսպատ սալերի քանդում	մ³	10.000	4.101	41.01
72	Բազալտե երեսպատ սալերի քանդում	մ³	6.000	4.101	24.60
73	Պատերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով, սալերի խարսխումով /7+6/մ2	մ²	13.000	28.154	366.00
74	Պատերի երեսպատում 30մմ հաստությամբ տուֆե սալերով սալերի խարսխումով	մ²	16.500	15.540	256.40
	Տարածքի շին աշխատանքներ, սալվածք				
75	Միաձույլ ե/բ ջրատար առվակի պատրաստում B-20 դասի բետոնից	մ³	9.500	68.788	653.48
76	Ամրանային ցանցի արժեքը	տն	0.304	522.137	158.73
77	D=50մմ ոռոգման համար փականների տեղադրում	հատ	3.000	7.723	23.17
78	Սալվածքի բազալտե սալերի քանդում /22+35/մ2	մ²	60.000	4.101	246.04
79	Սալվածքի վերականգնում բազալտե սալերով 40 մմ հաստությամբ	մ²	35.000	13.743	481.02
80	Հողային մակերեսի համահարթեցում սալվածքի տակ	մ3	6.000	3.232	19.39
81	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստութ.	100մ²	0.600	132.444	79.47
82	Հատակի բետոնե շերտի կառուցում 50մմ հաստ.B12.5 /թեթև բետոնի/	100մ²	0.600	201.053	120.63
83	Շին աղբի դուրս բերում բարձում ա/հնարանթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	4.200	3.675	15.43
84	40մմ հաստությամբ բազալտե ջարդոնեներից բրեկչա սալվածքի պատրաստում	մ²	60.000	8.320	499.22
85	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 10x20սմ	գմ	100.000	6.843	684.26
	Ներքին սառը ջրամատակարարում				
1	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ25մմ, լվացումով, ջրորացումով,փորձարկումով	գմ	8.000	2.323	18.58

1	2	3	4	5	6
2	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ20մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	9.000	2.668	24.01
3	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ15մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	28.000	2.607	73.00
4	Բրոնզե փականների տեղադրում Φ15մմ	հատ	4.000	3.821	15.28
5	Բրոնզե փականների տեղադրում Φ20մմ	հատ	1.000	4.352	4.35
6	Բրոնզե փականների տեղադրում Φ25մմ	հատ	1.000	4.645	4.64
7	Գնդաձև փականների տեղադրում Φ15մմ	հատ	6.000	4.059	24.36
8	Լվացարանի ծորակ-խառնիչի տեղադրում	հատ	2.000	6.009	12.02
9	Խոհանոցակոնքի ծորակ-խառնիչի տեղադրում	հատ	1.000	6.009	6.01
10	Հիգիենիկ ցնցուղ	հատ	1.000	9.306	9.31
11	Պոլիպրոպիլենային ձևավոր մասերի տեղադրում	հատ	15.000	0.106	1.58
12	Ճկուն կցորդիչ խողովակ D=15մմ	հատ	9.000	1.187	10.68
13	Ճկուն կցորդիչ խողովակ D=20մմ	հատ	1.000	1.583	1.58
	Ներքին տաք ջրամատակարարում				
1	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ20մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	10.000	2.974	29.74
2	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ15մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	30.000	2.818	84.54
3	Բրոնզե փականների տեղադրում Φ20մմ	հատ	1.000	4.352	4.35
4	Գնդաձև փականների տեղադրում Φ15մմ	հատ	6.000	4.059	24.36
5	Պոլիպրոպիլենային ձևավոր մասերի տեղադրում	հատ	15.000	0.106	1.58
6	Ճկուն կցորդիչ խողովակ D=15մմ	հատ	5.000	1.187	5.94
7	Ճկուն կցորդիչ խողովակ D=20մմ	հատ	1.000	1.583	1.58
	Ներքին կոյուղու ցանց				
1	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ100մմ /փորձարկումով/	գմ	6.000	1.865	11.19
2	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ50մմ /փորձարկումով/	գմ	23.000	1.213	27.91
3	Լվացարանի տեղադրում, սիֆոնով	հատ	2.000	28.519	57.04
4	Զուգարանակոնքի տեղադրում	հատ	4.000	29.778	119.11
5	Խոհանոցակոնքի տեղադրում /տաժտակով/	հատ	1.000	20.846	20.85
6	Զուգարանակոնքի ճկուն խողովակ D=100մմ	հատ	4.000	0.660	2.64
7	Պոլիվինիքլորիդե քառաբաշխիչ d=100x100մմ 45^0	հատ	1.000	4.095	4.09
8	Պոլիվինիքլորիդե եռաբաշխիչ d=100x100մմ 90^0	հատ	4.000	2.182	8.73
9	Պոլիվինիքլորիդե եռաբաշխիչ d=100x100մմ 45^0	հատ	1.000	2.157	2.16
10	Պոլիվինիքլորիդե եռաբաշխիչ d=50x50մմ 45^0	հատ	5.000	1.704	8.52
11	Պոլիվինիքլորիդե անկյունակ d=50մմ 135^0	հատ	13.000	1.087	14.14
12	Պոլիվինիքլորիդե անկյունակ d=100մմ	հատ	4.000	1.422	5.69
13	Պոլիվինիքլորիդե անցում d=50x100մմ	հատ	2.000	1.222	2.44

1	2	3	4	5	6
14	Անցամաքրիչ d=50մմ	հատ	3.000	1.539	4.62
15	Մուղիչ d=50մմ	հատ	1.000	1.539	1.54
	Ջեռուցում և օդափոխություն				
1	Կաթսայի տեղադրում 42կվտ	կոմպ	1.000	154.225	154.23
2	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500մմ	հատ	91.560	0.696	63.74
3	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սենց	327.000	5.233	1711.13
4	Մարտկոցների կախիչ	հատ	100.000	0.550	55.01
5	Փականների տեղադրում Φ40մմ	հատ	3.000	7.914	23.74
6	Փականների տեղադրում վերևի Φ15մմ	հատ	33.000	4.572	150.89
7	Փականների տեղադրում ներքևի Φ15մմ	հատ	33.000	4.499	148.45
8	Ավտոմատ օդահանի տեղադրում	հատ	33.000	2.287	75.46
9	Դատարկման փականի տեղադրում Φ25մմ	հատ	1.000	5.049	5.05
10	Ջեռուցիչի խցան	հատ	132.000	0.179	23.68
11	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ15մմ. լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	50.000	2.818	140.91
12	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում գործարանային ջերմամեկուսիչով Φ15մմ. լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	12.000	2.963	35.56
13	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում գործարանային ջերմամեկուսիչով Φ20մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	35.000	3.108	108.79
14	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում գործարանային ջերմամեկուսիչով Φ25մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	73.000	2.902	211.85
15	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում գործարանային ջերմամեկուսիչով Φ32մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	80.000	3.101	248.08
16	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում գործարանային ջերմամեկուսիչով Φ40մմ, լվացումով, քլորացումով,փորձարկումով	գմ	5.000	4.905	24.52
17	Պոլիպրոպիլենային ձևավոր մասերի տեղադրում	հատ	540.000	0.132	71.23
18	Շրջանառու պոմպ G=2.5մ3/ժամ H=2մ. N=2մ	հատ	1.000	24.365	24.36
19	Հետադարձ փականների տեղադրում Φ40մմ	հատ	1.000	9.884	9.88
	Էլեկտրամատակարարում				
1	24 մոդուլի համար վահանակ,Nedbox Legrand 601257	հատ	2.000	37.165	74.33
2	36 մոդուլի համար վահանակ,Nedbox Legrand 601258	հատ	1.000	61.166	61.17
3	Անջատիչ-բաժանիչ մաքրեռ 100Ա,DX-IS Legrand 406469	հատ	1.000	32.583	32.58
4	Անջատիչ-բաժանիչ մաքրեռ 63Ա,DX-IS Legrand 406461	հատ	3.000	28.612	85.84
5	Ավտոմատ անջատիչ միաբևեռ,B16 Legrand 403972	հատ	6.000	3.877	23.26
6	Ավտոմատ անջատիչ միաբևեռ,B25 Legrand 403974	հատ	19.000	3.969	75.41

1	2	3	4	5	6
7	Ավտոմատ անջատիչ միաբևեռ,C10 Legrand 404026	հատ	4.000	3.864	15.45
8	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ,C32 Legrand 404059	հատ	3.000	8.874	26.62
9	Թողարկիչ եռաբևեռ /6A/ CTX-mini Legrand 417006	հատ	4.000	15.783	63.13
10	Ջերմային ռելե 0,63A Legrand 417083	հատ	4.000	25.456	101.82
11	Ղեկավարման կոճակ start-stop Legrand 412916	հատ	4.000	12.589	50.36
12	Լուսատու առաստաղային լուսադիոդային կլոր Φ310x37մմ,22վտ	հատ	48.000	13.069	627.32
13	Լուսատու առաստաղային լուսադիոդային,9վտ	հատ	6.000	6.751	40.50
14	Լուսատու լուսադիոդային կախովի առաստաղի 15վտ	հատ	5.000	9.877	49.38
15	Վթարային միացման մարտկոցով լուսատու 9վտ էներգախնայող լամպով	հատ	4.000	9.824	39.30
16	Անջատիչ մեկստեղնավոր 6Ա	հատ	9.000	1.336	12.03
17	Անջատիչ երկստեղնավոր 6Ա	հատ	3.000	1.626	4.88
18	Անջատիչ անցումային /reverse/ 6Ա	հատ	4.000	6.268	25.07
19	Անջատիչ անցումային /reverse/ 6Ա երկստեղնավոր	հատ	2.000	9.144	18.29
20	Վարդակ հողանցիչով	հատ	95.000	1.665	158.13
21	Տուփ վարդակների և անջատիչների տեղադրման համար	հատ	113.000	0.158	17.89
22	Տուփ ճյուղավորիչ	հատ	30.000	0.158	4.75
23	Շորացուցիչ էլեկտրական 1,5կվտ	հատ	2.000	22.452	44.90
24	ВВГнг-LS-3x1,5մմ^2 կտրվածքով մալուխի անցկացում	մ	50.000	0.961	48.03
25	ВВГнг-LS-5x6մմ^2 կտրվածքով մալուխի անցկացում	մ	50.000	2.615	130.77
26	ПВ-3,1x1.5մմ^2 կտրվածքով հաղորդալարի անցկացում	մ	1500.000	0.219	327.88
27	ПВ-3,1x2,5մմ^2 կտրվածքով հաղորդալարի անցկացում	մ	1500.000	0.262	393.09
28	ПВ-3,1x16մմ^2 կտրվածքով հաղորդալարի անցկացում	մ	10.000	1.154	11.54
29	Տուփախողովակ կափարիչով 30x40մմ	մ	30.000	1.042	31.27
30	Պողպատ շերտավոր 40x4մմ	մ	12.000	1.014	12.17
31	Պողպատ անկյունային 50x50x5մմ,L=2մ	հատ	3.000	5.605	16.82
	Ընդամենը				33391.41
	Շահույթ	11%			3673.06
	Ընդամենը				37064.47
	ԱԱՀ	20%			7412.89
	Ընդամենը				44477.36

* Կապալառուն աշխատանքները կատարում է ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԱՒՐՈՎ հասցեում:

	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ

	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադ		Գեվ-էլլ Պլաստ ՍՊԸ
	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,	Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան
	Կ.Ուլնեցու 31	
	ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 084416661
	Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 220083335194100
	Կենտրոնական գանձապետարան	Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
	Գործադիր տնօրեն	Տնօրեն
	Աշոտ Կիրակոսյան	Սոս Կոռյան
	/ստորագրություն/	/ստորագրություն/
	Կ.Տ	Կ.Տ

Հավելված 9
ՀՏՊՀ-ԳՀ-ԱԷՃՊ-2019/1 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան "____»_____ 20 թ."

«ԳԵՎ Էյլ Պլաստ» ՍՊԸ-ն, որն գտնվում է Հայաստանի Հանրապետության ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, գրանցման թիվ 000846311 տրվել է 13.12.2012թ 001-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀՏՊՀ-ԳՀ-ԱԷՃՊ-2019/1* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետև՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավատտումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետև՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավատում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է, տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱԲՌԱ Քրեդիթ Ռեվորթինգ» ԲԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև __/__/20__ " (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային

ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավատացվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԳԵՎ Էլ Պրոստ» ՍՊԸ
22 Գեղարքունիքի մարզ, գ. Մարտունի
«Ակբա - Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
Հ/Հ 22008333519410 0
ՀՎՀՀ 08416661

Ս. Կոստան

Օր/ամիս/տարի

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Հեկերություն՝ «ԳԵՎ - ԷԼԼ Պլաստ» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Գեղարքունիք մ/ճ	
6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ՝ 220083335194100	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08416661	
8. Վճարողի ՀՄՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
10. Շահառուի ՀՄՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 00846441	
12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ 900018001231	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 2196000 (երկու միլիոն հարյուր իննսունվեց հազար)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ Հայրամ, AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է, գանձումը)՝ *ՀՏՉՀ-ԳՀ-ԱՇՀՐ-2019/1*	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առոչիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ս. Կոջան /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

08416661
«ԳԵՎ-ԷԼԼ ՊԼԱՍՏ»
"ГЕВ-ЭЛЛ ПЛАСТ"
"GEV-ELL PLAST"